

Աղպարու Քրոջաց

ՈՒՐ
ԳԱՐՈՒՆ Է



ՄԻՇՏ

ՀԱՅՊԵՏՆԱՆ

291.99

10488

15-80

Περικλής Α.

Καθηγητής Σχολής

3η

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՏՈԳՈՄՈՆ ՄԿՐՏՇՅԱՆ
ՏԻՒՒՑԻ ԵՎ ՍՈՒՅՑԻ

(Ուրարտական լեզուով)
Արմգիտ, Երևան, 1947 թ.

Ս Տ Մ Ը Ի Ն

Ամեն անգամ, երբ արևը բարձրանա,
Արևային ողջուն կտա քեզ սիրով,
Եվ կհուզվի, և հիացած կմնա
Անձարելի քո հանձարի լույսերով:

Ամեն անգամ երբ դարունը ծաղկի վառ,
Մի նոր դարնան կհանդիպի աշխարհում,
Որ ծաղկել է քո հանձարով մշտավառ՝
Արջանկարույր ծաղիկներով զարդարում:

Խնձույքներում, հանդիսներում ցնծալի,
Որքան զնդան բաժակները ոսկեզող,
Խոսքն առաջին կասեն՝ փա՛ռք քե՛զ, Ստա՛լին՝
Արջանկուսիյան ստեղծող ու հավերժող:



Կիշրվեն քո լեռ կրծքին հազար արքա թագ ու գահով—
Գլուցադնամա՛յր իմ Հայրենիք, հազար-հազար դա՛ր կմնաս,
ժայռ կրծքերը մեր անհամար զրա՛հ կանենք քեզ ապահով,
Սվ ժայռակուռ քո զրահով, որպես անառ սա՛ր կմնաս,
Ասաղերի պես բոցդ կընկնենք, կկիզվենք սուրբ, արդար մահով,
Երջանկութեան դու արեգակ, հավերժորեն վա՛ռ կմնաս:

1912 թ.

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ

(Սովետական Հայաստանին)

Միրել եմ ես քեզ ի ծնե, հայրենի հո՛ղ,
Դու մեր կյանքի հավերժական առաստարան,
Միրել եմ ես ժողովրդիդ բաղունին անդող,
Ոգին պայծառ, սիրտը՝ անմահ մի երգարան:

Միրել եմ ես լույս լճակը քո տեսչական,
Երկինքը քո՝ դոհարակուռ փառքի կամար,
Հովիտները քո ծաղկաշող և խոլական՝
Կաթնադետերն ստինքներիդ մշտավարար:

Եվ ձյունափայլ գագաթները քո երկնաքեր,
Անձեռակերտ արձաններն այդ՝ մեր վեհ նախնյաց,
Եվ որպես հար արբեցնող, անմեռ երգեր,
Քո խաղողի հնձանները՝ գինով լցված:

Թայց սիրում եմ ես քեզ հիմա, հայրենի հող,
Անասելի, անկրկնելի մի նո՛ր սիրով.—
Չէ՛իր զուգվել, օ՛, երբեք դու այդչափ գերող,
Չէ՛իր զուգվել այդքան լույս ու պսակներով:

Չէ՛իր եղել, օ՛, երբեք դու այդչափ հզո՛ր,
Այդքան հպա՛րտ, հրաշապա՛տ ու լուսաշող,
Արժիվ էիր դու շղթայած, թևակոտոր,
Ճախրում ես արդ երկնում ազատ՝ նոր թևերով:

Գ Ա Ր Ո Ւ Ն

Քնքուշ սրտում բոցն արարիչ մայր արևի,
Ջինջ աստղերի պայծառությունն աչքերի մեջ,
Կամարակապ շքեղ մուտքով ծիածանի
Դաշտը իջավ մայր արևի աղջիկը պերճ:

Քայլում է նա դաշտ ու սարով հանդիսավոր,
Շուրջը ցայում բույր ու աղբյուր, երգ ու կարկաչ,
Մեկ ժպիտով նրա կախարդ ու լուսավոր
Սփռվում են դաշտում հազար վարդ ու կակաչ:

Գարնան կարոտ աշխարհներից հեռու ու ցուրտ
Հավքերն ահա դեպ նրա կույս գիրկն են թռչում.
Դո՛ւք էլ թոեք, դո՛ւք էլ եկեք, հայն՛ր պանդուխտ,
Մշտագարուն հայրենիքը ձե՛զ է կանչում:

1945 թ.

Երևան

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Անթիվ անգամ քեզ խոցեցին դաժանարար,
Այրեցին քեզ, խորտակեցին հուր ու սրով,
Որպես փյունիկ մոխիրներից կրկին ելար,
Հաննեցիր ու վեր խոյացար նոր թևերով:

Դարեր ընդմիջտ հնչել է վառ ու կհնչի
Աղատատենչ քո հուր լեզուն արևադուն,
Խաչաձևվող հողմերի դեմ կանգուն ես միշտ
Որպես անհաս լյառն Մասիս, որպես Սասուն:

Արդ, դաշինքով եղբայրական ու սրբազան,
Սիրտդ մայիս և հասակդ է Մասիսը սեզ,
Արևային փառքդ են երգում հաղար դուսան,
Եվ խնդումդ, որ զնգում է աշխարհով մեկ:

Զի՛ խորտակվել, շի՛ խորտակվի նալդ հզոր,
Որքան շաշեն փոթորիկների ճամբիդ վրա,
Մեծ լենինյան փարոսներով վառ ու բոսոր
Լույս ափերում կյանքդ հավե՛րժ կհուրհրա:

ՄԱՅՐ ԻՄ ԵՐԿԻՐ

Երբ հողնում եմ ես գրքերից, աշխատանքից ամենօրյա,
Բայ եմ անում քո լույս կյանքի դիրքը պայծառ ու ոսկեգիր-
Եվ սիրտս է հոսում՝ հրե հեղեղի պես՝ քո առօրյան,
Եվ լցվում եմ ես նոր ուժով ու աշխուժով, մա՛յր իմ երկիր:

Երբ տանջում է ինձ սևաշյա իմ երազը՝ սիրո աղբյուր,
Ու փռվում է սրտիս վրա կապույտ մշուշն անծայրածիր,
Նշում եմ ես, շրջում ծաղկած քո դաշտերում հայրենաբույր,
Ու ցրում ես արևի պես մեզը սրտիս, մա՛յր իմ երկիր:

Երբ հիշում եմ ննուշ մորս, որ պահված է քո լույս հողում,
Քո սուրբ հողն եմ ես համբուրում մորս դեմքի տեղ անբասիր,
Եվ մայրեր բյուր սիրահամբույր սրտիս խինդի անձրև տեղում,
Հաղեցնում եմ կարոտս հուր, հանց սառը ջուր, մա՛յր իմ երկիր:

Կուզեմ քեզ հետ տխրել, խնդալ, դոհվել կամքիդ գրահակիր,
Վերասլաց լույս ամբողջիդ լինել բազալտ, ավազ ու կիր,—
Եվ խնդովյան գրկումնս եմ ես և անմահ եմ նման կյանքիդ,
Որ քո՛նն եմ ես, որ ի՛մն ես դու, որ մեկ սիրտ ենք,

մա՛յր իմ երկիր:

Ա.Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

(Էփսայրումա)

Թիթեոնների տես սպիտակ
Գրսում ձյունն էր թրթռում,
Ես սենյակում պառկած մենակ
Երգերդ էի քրքրում:

Զառ ու զարբար ծաղիկներիդ
Մնուշ բույրով արբեցի,
Զառ ու զարմանք երազներիդ
Քնքուշ թևին քնեցի...

Ու ... ներեցեք, վարպետ անդին,
Գիրքդ ձեռքես ընկավ վար.
Հողիս մթնեց, ասես նրբին
Սիրտդ ձեռքես ընկավ վար:

Օ՛, շէ՛ որ դա ժողովրդիս
Սիրան է հնում հողմահար:

1938 թ.
Արևած.

ԿՈՒՏԵՆՏԵՍԱԿԱՆԻՆ

Երբ դաշտ ես ելնում դու բաց ճակատով,
Ժպտում է հեռվից քեզ դաշտը պայծառ,
Երբ տուն ես դառնում, առատ սեղանով՝
Ողջունում է քեզ վաստակդ արդար:

Պողպատե բազկով ոսկեղօծիր դու
Հողը հայրենի՝ քերքով լիառատ,
Ո՛չ որ քո ձեռքից այն չի խլելու,
Հողիդ ազատ է և ուղիդ անկապ:

Մե՛ծ Ստալինյան արև օրենքով
Պարզելած է քեզ ազատ կյանք ու օր,
Ապրի՛ր խնդասիրտ, հազա՛ր բարիքով,
Ու փառք տուր երկրիս արևին հզոր:

1939 թ.



Հողուս խելագար թռիչքով աննինջ
Ճախրեցի բոլոր լույս ուղորտներում,
Եղա բնության վսեմ ու դյուրիշ
Բոլոր մութ ու կույս դադանարաններում:

Չգացի, որ ես մի շող եմ միայն,
Արևների մեջ բյուր, անշեջ ու վառ,
Մինչդեռ, երբ հողով փոքր էի այնքան,
Կարծում էի ինձ արև մի պայծառ:

Որքան հեռուներ սամառնեց հողիս,
Այնքան ես փոքր դարձա իմ աչքին,
Մինչդեռ գազաթներն հեռվից դիտելիս,
Վհհոթյամբ են հար լցնում մեր հողին:

Գու մի՛ ընկճվիր, սիրտ իմ, այլ տոկա,
Եթե չեմ կարող լինել վեհ մի լեռ,
Գոնե լեռների լանջին մի զուլալ
Աղբյուր կլինեմ երգով սիրաջեր:

Որ վեր մագլցող ճամփորդն անվեհեր
Երբ հողնաժ, պապակ ալունքիս հասնի,
Իմ անուշ ջրով սիրտը հովացնի,
Ու քայլի դեպ լույս դադաթներն ի վեր:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻՆ

Որպես սահուն, թեթև նավակ,
Գիրկդ նետվեմ, անվերջ լողամ,
Կրծքիդ երդի անձրև տեղամ,
Իմ ծփանո՛ւտ, ծավի՛ր ծովակ:

Սրտիս սեղմեմ ամեն կոհակ,
Ջերմ համբուրեմ՝ ու դողդողամ,
Սիրուց շիկնեմ ու շողշողամ,
Իմ ծիծաղկո՛ւտ, ծավի՛ր ծովակ:

Ցուրերից քո լալ ու սուտակ,
Խոսքերից քո արևահամ,
Հյուսեմ երդեր հավերժաթարմ,
Ծուփ-ծիածան, ծավի՛ր ծովակ:

Հալվեմ, ձուլվեմ ջրիդ հատակ,
Վառվեմ քեզ պես ու լույս դառնամ,
Հայրենիքիս կրծքին շողամ,
Լույսի հնձան, ծավի՛ր ծովակ:

ՎԵՐՁԻՆ ՀԱՄԲՈՒՅՐ

Երկնում զարկված սեղ արծվի պես
Վերքս թևի մի պահ թվաց.
Սիրտս կրկին հպարտ ու վես՝
Ոչինչ շղթաց ու շցավաց:

Քայց երբ սառեց արշունս տաք,
Ես վայր ընկա խոնավ հողին,
Ախ, զգացի, որ կրծքիս տակ
Մահ էր նյութում վերքս խորին:

Խոր տնքացի ես ցավելով
Որ շպիտի էլ վեր ելնեմ,
Համբուրեցի ապա հողն այն,
Որի համար պիտի մեռնեմ...

Հայրենի հող, — մրմնջացի,
Գրկիր անուշ ինձ մոր նման,
Անմահության պարտեղն ես դու,
Իսկ ես՝ ծաղիկն անմահության...

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆԸ

Թնդում է շեփորը հաղթահար,
Տոն է մեր փողոցում նորից,
Հուլզերի ընթացքը այսօր
Վարար է Վուզայից, Դոնից:

Անսահման խնդուծյուն է հիմի,
Ծովերը դարձել են գինի,
Եվ այս ծով խնդումից ամեն տուն,
Ամեն սիրտ իր բաժինն ունի:

Չկա իմ աշխարհում մի անկյուն,
Ուր շող-շող թասերը շղնդան,
Օ՛, զոհված հերոսները հողի տակ,
Լուսեղեն խնդուծյունն այս կղզան:

Ժպտում է աշխարհը, նայեցե՛ք,
Ժպտում է արցունքի միջից.
Երեկ դեռ մրրիկ էր արնաներկ,
Իսկ այսօր դարձան է ջինջ:

1935 թ. 9 մայիսի

ԻՄ ՌԱԶՄԻԿ ԵՂԲԱՅՐ

Իմ ռազմիկ եղբայր, սուրդ դի՛ր պատյան,
Առնենք մենք նորից քնար ու բրիչ,
Կարոտ սրտի պես կանչում է ահա
Մեզ աշխատանքի հեքիաթը թովիչ:

Քո հնգամյակի ջենքը անավարտ,
Եվ իմ «Խնդության պոեմը» թերի,
Մեզ են սպասում սիրով անաղարտ՝
Նման կարոտյալ հարազատների:

Չէ՞ որ կովեցիներ մենք նրանց համար
Եվ շմոռացանք մենք ոչ մի վայրկյան,
Խնչպես մարտերում մաքառող մի հայր
Պահում է սրտում պատկերը մանկան:

Իհհ, ռազմիկ եղբայր, սուրդ դի՛ր պատյան,
Առնենք մենք նորից քնար ու բրիչ,
Կարոտ մանկան պես կանչում է ահա,
Մեզ աշխատանքի հեքիաթը թովիչ:

1945 թ.

ԵՐԳ ՀՆԳԱՄՅԱԿԻ

Թշնամին պարավեց... Պայծա՛ռ առավոտ,
Խնդության անձրև տեղաց աշխարհին,
Անցա՛ն օրերը սև ու արյունոտ,
Փառքի ծիածան շողաց իմ երկրին:

Հուներից ելած դետերը պղտոր
Հոսեցին զուլալ նորից անխռով.
Հնդհատված ոսկի հեքիաթը կյանքի,
Կարկաչեց նորից ուրախ զնդալով:

Եվ վարդապսակ երկնքի ներքո,
Կամարների տակ ծիածանավոր,
Որպես դյութական դանձերի ամրոց,
Կանգնեց մեր դիմաց հնդամյակը նոր:

Մեր սիրտը ծարավ նոր խոյանքների,
Մեր հոգին անզուլ տրնության սովոր,
Կամքով հաղթական երգով ցնծազին
Կառնենք և ամրոցն այդ հզորազոր:

1946 թ.

Երևան.

ԵՐԿՈՒ ՀՆՁՎՈՐ

Վաղորդյան դոհար շաղերով օծված,
Արեն է ժպտում սարի թիկունքից,
Ինչպես լուսեղեն աղջիկն իմ սիրած,
Շողակ, փայլակ է թափում հայացքից:

Ցորենի ոսկե խուրձերը դրկած
Իս' հնձվոր աղա՛ ելնում եմ ձորից,
Ցորենի ոսկե խուրձերը դրկած,
Իս' հնձվոր աղջիկ՝ ելնում է սարից:

Իս ու արևը՝ հնձվորների երկու,
Ողջույն ենք տալիս իրար սրտաբաց,
Եվ հպարտությամբ խնդրում ենք անհուն,
Լույսի, լիության խուրձերը դրկած:

1940 թ.

A II
28679 10488



Տ Ր Ի Ո Լ Ե Տ Ն Ե Ր

1

Չնդո՛ւմ են, զնդո՛ւմ են ուխտերը,
Գնացքը արագ է այնքան,
Թվում է, թե պարզես ձեռքերը՝
Կգրկես ապագան:

Շիկնե՛լ են, կրա՛կ են սրտերը,
Թնդո՛ւմ է շեփորը հաղթական.
Չնդում են, զնդում են ուխտերը,
Գնացքը արագ է այնքան:

2

Գալի՛ս է լուսե մեր գալիքը,
Արև է, գարուն է, խնդում է,
Սիրո պես անուշ է անունը
Գալի՛ս է լուսե մեր գալիքը:

Զգում է անգամ իմ մանկիկը
Շեփորը նրա, որ թնդում է,
Գալի՛ս է լուսե մեր գալիքը,
Արև է, գարուն է, խնդում է:

3

Իր լուսե ոտքի տակ կփռեմ
Նս սիրտս, որպես դորդ ծաղկավառ,
Տենչանքներս, անուրջներս անհամար
Իր լուսե ոտքի տակ կփռեմ:

Նվ ինչպես՝ ծերկաթին կսփռեմ
Իր ճամբին երգերի աստղաշար.
Իր լուսե ոտքի տակ կփռեմ
Նս սիրտս որպես դորդ ծաղկավառ

1945 թ.

ԵՐԿՈՒ Գ. ԱԶԵԼ

Որքան թեժ, արնոտ ճամփաներ շափեմ,
Կարոտով անքուն մայրս կսպասի:

Բորբ հեռուներում որքան տառապեմ,
Սրտով մորմորուն մայրս կսպասի:

Թե ոտքից, ձեռքից, աչքից էլ զրկվեմ,
Վերքերս սրտում՝ մայրս կսպասի:

Մահս դուք նրան երբեք չգուժեք,
Կսկիծով անհուն մայրս կսպասի:

Ժրք ես կզոհվեմ, մայր հողում թաղեք,—
Հողի գրկում էլ մայրս կսպասի:

1944 թ.



Հայրենիքիս ձյունազաղաթ հպարտ լեռներ,
Վեհությունը ձեր անսահման տվեք սրտիս:

Լեռների մեջ անդնդախոր ասեղ ձորեր,
Խորությունը ձեր կուսական տվեք սրտիս:

Ղեռներից վեր, հավերժական բիւ
անհուններ,
Խորհուրդը ձեր կախարդական տվեք սրտիս:


Արևաշող մեր դաշտերի վառ ծաղիկներ,
Գուլնն ու բույրը ձեր դյուրթական տվեք
սրտիս:

Ա՛խ, մայրական ու սիրահար անբիծ սրտեր,
Հմայքը ձեր անմահական տվեք սրտիս:

Առանց ձեզ ես աղքատ եմ խեղճ, ձեր մեջ՝
արքա,
Ծոխ գանձերը ձեր հողեկան տվեք սրտիս...

1940 թ.

ՍԻՐՈ ԵՐԳԵՐ



Հողմերի մեջ, բոցերի մեջ դու տոկա՛,
Քանի գիտես, կա հուշսի դեռ մի կածան,—
Մեր հանդիպման բաղձալի օրը կդա՛,
Որպես դաժան մրրկից ետ՝ ծիածան:

Քո հեռավոր աստեղային հմայքով
Կապրեմ ընդմիշտ, կապրեմ անվիշտ ու
հպարտ.

Սրախ խորքում՝ կարոտի թեժ կրակով՝
Կպահեմ հար սերդ վառ ու անաղարտ:

Թեժ մարտերում կոփված մեր լույս հողու
մեջ

Կա տքնությամբ հյուսված կամուրջ
ասկեման,

Ո՛չ ծովերը, և ո՛չ վարար գետերը
Չե՛ն անջատի մեզ իրարից հավիտյան:

Հողմերի մեջ, բոցերի մեջ դու տոկա՛,
Քանի գիտես, կա հուշսի դեռ մի կածան,—
Մեր հանդիպման բաղձալի օրը կդա՛,
Որպես դաժան մրրկից ետ՝ ծիածան:

ԱՌՏՎԱՆ ՄԹՆՇԱՂԻՆ

(Կոլխոզական)

Առտվան մթնշաղին
Ոտքերս ցող ու շաղին,
Ես դաշտից տուն եմ դալիս՝
Ինձ աված երգ ու տաղին:

Վարաղնած շող շափաղով,
Արևի պես շողալով,
Իմ յարը դաշտ է ելնում
Զրնգուն ծափ-ծիծաղով:

Յարիս ծուփ ծամերի պես
Արտերն են ալիկոծվում,
Ալեծուփ հասկերի պես
Յարիս ծուփ ծամն է ծփում:

— Անջիդյար, ասի նրան,
Ողջ դաշտը ջրել եմ ես,
Առվակիս ջրի նման
Ողջ գիշերը երգել եմ ես:

Սյդ ինչպե՞ս ձենս շառար,
Ու տնից դուրս շփոար,
Վա՛րդ էիր—թառամեցի՞ր,
Հո՛ւր էիր—մոխի՞ր դառար:

— Անհողի, ի՞նչ ես ասում,
Քեզ մո՛տ էի երազում.

Այգայիսի անուշ քնից
Արթնանալ ո՞վ է ուզում:

1947 թ.

ԶՄՐՈՒԽՏ ՍԱՐՈՒՄ


Զմրութստ սարում զովն է ընկել,
Հովն է շնկում անդադար,
Սիրտս սիրո ծովն է ընկել,
Սեր եմ երգում անդադար:

Զմրութստ սարի ծաղկուն լանջին
Կաքավներն են դաշլաշլում,
Իրար գրկած կարկաշելով
Աղբյուրներն են գալարվում...

Հե՛յ, Զմրութստ սար, շեմ նախանձում
Հովիտներիդ ծաղկավառ,—
Սիրտս Զմրութստ սար է ցնծուն
Գարուն, ձմեռ, թե ամառ:

Այնտեղ վճիտ ու վարդաբույր
Սիրո գետերն են հոսում,
Հով ու ծաղիկ, վարդ ու բլրուլ
Անմահ երգեր են հյուսում:

1940 . 47 ք.



Դու ծաղկապսակ բուրավետ ծառ ես,
լուսե ցնորքներս դեպի քեզ թռան,
Իրիկնածամի թռչունների պես,
Երկնքից իջան, քեզ մոտ հյուր եկան:

Լույս ուրտները թողեցին անդարձ,
Դեպի քո աչիրն իջան երազուն,
Քո անուշ գրկում դու կյանք տուր նրանց
Եվ քրոջ նման գգվիր սիրասուն:

Գիրկդ բույն շինիր իմ լույս հավքերին,
Փայտաշիր նրանց թովչանքով գարնան,
Որ ինչ լուսեղեն հեռվում էլ ճախրեն,
Նորի՛ց կարոտով քո գիրկը դառնան:

1940 թ.

Հ Ա Յ Ր Ե Ն Ն Ե Ր

1

Աչքե՞րդ են ծովից հանած,
Թե ծովը՝ քո աչքերից,
Ունքե՞րդ են ամպից բերած,
Թե ամպը՝ քո ունքերից:

Վա՞րդն է քո այտից ծլած,
Թե այտերդ՝ հուր վարդերից.
Ա՛խ, դո՞ւ ես սրտես ծնված,
Թե ես՝ քո սիրո ծովից:

2

Ի՞նչ հուր-հուր աչեր ունես,
Նայողի սիրտն են խորովում,
Սայրասուր ունքեր ունես,
Սիրողիդ ուշքն են մոլորում:

Աչքերդ են բախտի կշեռք,
Ունքերդ կանգնած վերևում,
Կշռում են ցավս ու խինդս
Ու հողուս ծովն են խռովում:

3

Երբ սերդ սիրտս մտավ,
Մի կանաչ տունկ էր դալար,
Այս քա՞նի տարի անցավ,
Տունկն հիմա դարձել է ծառ:

Սրտիցս սնունդ առաւ,
Արմատներ ձգեց հազար,
Ո՞նց ալիտի հսնես անցաւ՝
Ծառի հետ սիրտս էլ անչարս:

4

Հասակդ կանաչ-տերև
Վարդենի դալար ճյուղերով,
Երեսդ ճյուղքից վերև
Ալ վարդ է՝ գոհար շաղերով:

Ես լինեմ գարնան արև,
Հալաքեմ շաղը շողերով,
Ես լինեմ սոխակ անձեռ,
Քեդ գովեմ անո՞ւշ տաղերով:

1940 թ.
Երևան.

ՊԱՀԵՆ ԾԵՐՈՒՆԻՈՒ

Մեր ապրուստն ի՞նչ է, մի կտոր շոր հաց,
էն էլ հրեն ճա, երկնից կախված:
ՀՈՎ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

1

Արագյազի հովիտներում
Ռանեի ես մի հին ծանոթ.
Շատ էր խնդրում, նամակ գրում,
Որ հյուր գնամ ես իրենց մոտ:

Ծա էլ վաղուց չէի տեսել
Բարեկամին իմ սիրելի,
Ու սարերի ճամփան բռնել,
Քնում էի կարոտով լի:

Ժպտում էին ինձ սար ու ձոր,
Շուրջս ծովն էր ծիլում հասկի,
Պեսս դաշտը հագել էր նոր
Խշխշուն շոր՝ խաս ու ոսկի:

Քնում էի կարոտով լի,
Ծվ իմ ջահել ու վառ հոգում—
Հին հուշերի, նոր հույզերի
Մի օվկիան էր խենթ աղմկում:

Յի հին ու նոր կյանքի մասին,
 Հասում էին խոհեր խորունկ,
 Երբ հովիվական մահակն ուսին,
 Դեմս ելավ մի հաղթ ծերունի:

— Բարև', պապի,—ասի ուրախ,
 Ու խորին մի համակրանքով,
 Կանդ առա ես բլբի վրա,
 Դեմքս սղողված քրտինքով:

— Բարև, տղաս, ի՞նչ ճամփորդ եք,
 Ո՞ւր եք գնում էդպես մենակ,
 Նստեք, մի քիչ թուփուն քաշենք,
 Հանդստացեք ու կզնար:

Թե մեր գյուղն եք գալիս, արդեն
 Հասել եք ձեր նպատակին,
 Թե ուրիշ գյուղ, օրը մթնեց,
 Հյուր կլինեք կոլխոզնիկին:

Ու մի անզուսպ գորովանքով
 Թիկնեց ծերը կանաչ գորգին,
 — Շնորհակալ եմ,—ասացի դո՛հ,
 Ու թիկնեցի ես էլ կողքին:

— Ուրիշ գյուղ եմ գնում, պապի,
 Բայց ինչո՞ւ քեզ ես հյուր լինեմ,
 Մեր սարերում ավազակի
 Խումբ չկա, որ երկյուղ կրեմ:

— Չէ', գավախ, էդ սոաջվան,
 Սարերը չեն՝ գողերի բուն,
 Բայց գիշերն էլ ի՞նչ ճանապարհ,
 Բա դարիքին չկանչե՞նք տուն:

Համ էլ սարի եղանակը
Օրը հազար տեսք է մտնում,
Աչք ես թարթում, արևոսկը
Կորչում է ու երկինք մթնում:

Ա՛յ, նայիր էն սարի ճակատին,
Պար են բռնել ամպերը մութ,
Ի՞նչ խմանաս, որ կես ճամփիդ,
Անձրև չի գա, կամ թե՛ կարկուտ:

Առ վերարկուս, վրադ դցիր,
Քրտնած ես դու, երիտասարդ,
Ասող էկել բարի դորձի,
Տուն շրտնաս հանկարծ հիվանդ:

— Ենթահակալ եմ, պապի, բայց խոմ,
Պարտական չե՛ս դու ամենքին,
Երկար ճամփա, հազար ճամփորդ,
Դու ո՞ր մեկին...

— Է՛հ, որդի ջան, սխալ ես դու,
Ինչո՞ւ ես էդ հարցը տալի,
Մեր դուռն ամեն ազնիվ մարդու
Առջև բաց է, սեղանը լի:

Հիմի էլ էն աշխարհը չի,
Որ հաց չնի, տանք դոնադին.
Փառք ասածու, աչքներս լի,
Համ հաց ունենք, համ անկողին...

Լոկո ծերուկիս ու ինքնաբաժ
Փչեց ծուխը ծխամորձի
Ու ցրեց այն վայրկենաբար,
Սարի հոմք շարածձի:

— Այն էլ ասեմ, քեզ, որդի ջան,
Կյանքում շատ կան դեռ շուն ու գել,
Բայց շեն կարող երբեք նրանք
Մեր մարդասեր հողին պղծել:

Ժողովուրդը սար է հաստատ,
Բան շեն անի ժողովրդին,
Էդպես հաղար դաշլի ոհմակ
Նա ջարդել է ու կշարդի:

Ժողովուրդը մեղլի նման
Խաղաղ կյանքում մեզը է շինում,
Վա՛յ են բոռին նենդ ու անբան,
Որ էդ մեղրին աչք է դնում:

Մարիկանց, որդի, դեռ սկզբից,
Մարդավարի պատիվ կտանք,
Իսկ երբ տեսանք մարդ շեն, ալ իժ,
Իժին վայել պատիժ կտանք...

Լոեց ծերուկն ու հայացքը
Մեր արծվի պես հառեց հեռուն.
Չարաճճի հովը հիմի
Նրա բեղի հետ էր պարում:

3

Ասի՛—Պապի՛ դու իմ սիրտը,
Կցրիր քաղցր շատ հույզերով,
Կուղենայի ես շա՛տ երկար,
Չբույց անել քեզ հետ սիրով:

Որքա՛ն եմ ես ուրախ, պապի,
Երբ քեզ նման ծերերն անգամ,
Մեր նոր կյանքի, նպատակի,
Ձերմ պաշտպան են ու բարեկամ...

— Էս կյանքն ինչպէս աչքի լույսը,
Ամեն մի մարդ կապշտպանի.
Էստեղ աճած ամեն բույսը,
Իր մեջ արին, քրտինք ունի

Ժողովրդի հետ միասին,
Ես էլ եմ շատ արին թափել,
Տեսնո՞ւմ ես փոսն իմ երեսի,
Գաշնակի գնդակն է ծակել:

Ջահել, ջիվան կինս մեռավ,
Դարդի ձեռից և անոթի,
Առյուծի պես տղաս կորավ,
Բաժին դառավ թնդանոթի:

Ա՛խ, իմ բալա, ասլան բալա,
Ո՞ր քարի տակ ընկար յարար,
Գերեզմանդ է վարդ ու լալա՞,
Թե՞ անապատ, քար ու քարափ...

Էհ, բայց ոչինչ, մատաղ եղավ
Իմ քաջ որդին ժողովրդին,
Նրա արյունն արև դառավ,
Սղբայրների ու հոր սրտին...

Հիմի ազատ էս սարերում,
Հանդն եմ պահում կոլեկտիվիս,
Ու իմ որդու հոտն եմ առնում,
Ամեն ծաղկից, ամեն հովից:

Ամեն հասկից, ամեն պտղից,
Անուշ հոտն եմ առնում որդուս,
Քեզ պես ազիզ բալիկներից,
Հո՞ր կարոտն եմ առնում որդուս:

Ու հսկելով էս սարերը,
էս դաշտերը լիութեան ծով, —
Հենց դիտեմ, թե ես իմ սրդու
կյանքն եմ պահում միշտ ապահով...

4

Եվ մահակին նա հենվելով,
— Գնանք, —ասով, — Էրիտասարդ,
Մեր դաշտերը մարդ ման գալով,
Քամուն կտա ամեն մի դարդ...

Եվ իջնում էր գառիվայրից
Ուղեկիցս կայտառ ու վես,
Շարժելով իր թիկունքները,
Երկու շարժուն ժայռերի պես:

— Տեսնո՞ւմ ես դու մեր արտերը,
Մով են կտրել, լիութեան ծով,
Ահն ու սովն են դյուզից շքվել,
Մարդու կյանքն է միշտ ապահով:

Մարդիկ բարի, մարդիկ ուրախ,
Ազատ, անհող հավքի նման,
Մեր սարերում դարդը մեռավ,
Հին, անիծված կյանքի նման:

Էլ չեն թափում մարդիկ արցունք,
Գառը դատած բերքի համար,
Էլ չեն մարդիկ հացը խլում,
Իրար բերնից գազանաբար:

Աշխատում ենք, ապրում սիրով,
Ողջ գյուղն ինչպես մի ընտանիք,
Քանի գնում կյանքն է ծաղկում,
Դառնում ուրախ ու երջանիկ:

Ինձ ասում են ծերացել ես,
Հերիք բանես, հանդիստ մնա,
Չէ, ասում եմ, ես ջահել եմ,
Էս կյանքում մարդ չի ծերանա:

Չես աշխատում հիմի էլ դու,
Հարամակեր աղի համար,
Լիանում է թե աչքը քո,
Թե երկիրը մեր շինարար:

Ճիշտ էս օրն էր անցած ամռան,
Երբ ինձ մի թանկ սրարդև տվին,
Հետն էլ դռշիւ էս նշանը,—
Ասես սրտիս արև տվին...

Իսկ երբ հարցրեց ինձ մի ջահել,
Բանաստեղծ էր քաղքից եկած,
— Պապի, քանի՞ տարեկան ես,
Ասա, որ քեզ թեթի պիտ տամ:

Ես ասացի,—Որդես դու իմ
էն հին կյանքը կյանք՝ շահվես,
Ուղիղն ասած ինն հարյուր
Քսան թվի ծնված եմ ես:

Էլ ծիծաղը խոմ ծիծաղ չէր,
Մարից պրծած դարնան հեղեղ,
Հենց էսպես էլ թերթում գրեց.
Իմ խոսքերը էն լավ տղեն...

Ասի,—պապի, ասածիդ պես
Իմ խնդումն էլ հեղեղ դառավ,
Դու հին սերունդ, բայց նոր մարդ ես,
Հիանալի՞ մարդ ես, իրավ:

Ճերմակափառ մաղերիդ մեջ
Տեսնում եմ ես հին կյանքը դառ,
Ժպտուն, կայտառ աչքերիդ մեջ,
Նոր աշխարհը մեր արևավառ:

5

Խոսքով ընկած մենք շիմացանք
Ինչպես հասանք գյուղը մոտիկ,
Ու թե ինչպես մաղվեց հանկարծ
Պաղ անձրևը մանրահատիկ:

Իրիկնային հովն էր պարում
Կանաչ հասկի ծովում անափ,
Չորում գետն էր խենթ հրհռում,
Գալարվելով ինչպես վիշապ:

Ահա գյուղը գետի ափին,
Փոքրիկ քաղաք ասես փռված,
Վառ լույսերի բույլը ճակտին,
Շողշողում է լայնատարած:

Ու սուղվել է ցոլքը նրա,
Դեռ տակավին զուլալ գետում,
Նայում ես ու սրտիդ վրա,
Հույզի անձրև է կաթկթում:

Ահա անցանք մեծ կամրջով,
Մտանք գյուղը լուսապայծառ,
Անցնում ենք լայն փողոցներով
Զրուցելով մտերմաբար:

Ու կանգ առավ ծերուկն հանկարծ:
— Մեծի խոսքը միշտ է արդար,
Անձրևն եկավ, օրն էլ մթնած,
Էլ ի՞նչ ճամփորդ, ի՞նչ ճանապարհ:

Իմ հյուրն ես ու իմ աչքի լույսն,
էս մթնով քեզ շեմ թողնի դուրս:
Ու մտերիմ ընկերոջ պես,
Թեև բռնած ինձ տարավ ներս:

Երբ բարձրացանք մենք սանդուխքից,
Կանգնեց շեմքում իր լուսավոր
Ու բառերն այս մեկիկ-մեկիկ,
Արտասանեց խորհրդավոր:

— Քսան տարի նոքար էի,
Աղեն մեկս երկու շաբաթ,
Տասը տարում, կոշեկտիվում՝
Մրոտ բունս սլաշատ դառաւ...

Ու ներս մտանք: Իրոք շքեղ
Քաղաքատիպ բնակարան,
Նկատվում էր նաև այնտեղ,
Համեստ ճաշակ կահավորման:

Մի սրահ էր դա ընդարձակ,
Երկու կողմում հանց հայելի,
Փայլում էին վառ ու հստակ,
Կուսամուտներն հրաշալի:

Սովետական կենցաղն այստեղ
Մուտք էր գործել ամեն ինչում.
Եվ որ կողմ որ նայում էիր,
Քեզ նորության շունչն էր փչում:

Ահա ռադիոն, պատեֆոնը,
Ահա լամպը էլեկտրական,
Եվ ժամացույց և մահճակալ,
Եվ գրքերով լի պահարան:

Նույնիսկ դորդը, որ կախված է
Մաքրամարուր դեմի պատին,
Նրա վրա նուրբ բանված է
Ստալինի պայծառ անդրին:

Կազում էր ինչպես դրսում խշշալով
Քարակ անձրևն էր դեռ մեղմիկ մաղում,
Ու պատուհանից ներս սողոսկելով
Սարի դեփյուռն էր սենյակում խաղում:

Կանգնել էի ես լուսամտաի դեմ,
Շնչում էի թաց բուրմունքը քաղցր,
Ու նայում էի աչքերին գյուղի,
Որ ժպտում էին խավարում թանձր:

Դե՛հ, բարեկամս, ճամփա ես եկել,
Խո՞մ շնք թողնի որ դու լեզու առնես,
Սկ, նստիր, տես ինչ լավ ճաշ ենք հփել,
Թեև քո պատվին քիչ է, կներես:

— Շնորհակալ եմ, — ասացի, — պապի,
Մեկ բաժակ ջուրն էլ շատ է ինձ համար,
Թե անուշ լեզվով կտան ինձ պատիվ,
Քան թե կեղծ սրտով մորթեն հավ ու դառ:

Կերակրի ու թարմ, ծաղիկ լավաշի
Հաճելի բուրմունքն օդը հազեցրեց,
Ոսկեշող գինին երգելով հոսեց,
Ու առոք-վառոք նստեցին ճաշի:

— Քեզ փեշքեշ, որդի, էս մեր շնն տունը,
Մեր աչքին, գլխին, բարով ես եկել,
Թե ինչ շափի է իմ խնդույթյունը,
Աշուղն իր սաղով չի կարող երգել:

Ուղում եմ էսպես ամեն, ամեն օր,
Ազիզ հյուրերի հետ նստեմ սեղան,
Քաս-թասի զարկենք ուրախ, բախտալուր,
Մանուկներն անհող երդեն ու խաղան:

Ով որ ասրել է հին, սև աշխարհում,
Տեսել է էն դառն, արշունոտ կարգը,
Նա՛ է իմանում, թի ինչ է խնդում,
Նա է հասկանում էս կյանքի հարգը...

Սվ խինդ էր թափում դեմքից ծերունու,
Խնդության տիպար լիներ նա ասես,
Վերցնելով ձեռքը նա թասը գինու
Կենացն առաջին սկսեց այսպես.

— Մեր հայրերը, մեր պապերը
Հենց ես ինքս ինչքա՛ն, ինչքա՛ն
Պաշել ենք խաչն ու սլառերը,
Մունկի շոքել հազար անգամ:

Ինչքա՛ն ենք մութ օդաներում,
Քարու հացը մեր ծնկներին,
Միտել դարդոտ շիրուխներն ու
Չոռ ենք ավել հեքիաթներին:

Հավասացել մանկան նման,
Որ մի օր լույս կիջնի վերից,
Որ լիության ծով մանանան,
Կթափվի մեր երգիկներից:

Որ գիշերը քնես, զարթնես,
Կրնկնես պալատն եղեմական,
Ու հազարան բլբուլը քեզ,
Երգեր կասի անմահական:

Իսկ ո՞վ բերեց մեզ էս բախտը,
էս խնդությունն, էս մանանան,
էս արևը, էս դրախտը,
Ու բլբուլներն էս հազարան...

Դե՛հ, առաջին թասը վերցրե՛ք,
Խմենք կենացն էն մեծ մարդու,
Որ մեր կյանքին արև բերեց,
Որ բերեց մեզ սեր ու խնդրամ:

Ու բուրբ էլ անհուն սիրով,
Խմեցինք ջինջ հուր-հուր դինին,
Արև ու կյանք ցանկանալով
Արև ու հայր Ստալինին:

Երգում էին պատեֆոնն ու
Բադիոն-արևուչներն հաղարան՝
Նոր կյանքի վարդն էր այս տունը,
Նրանք թառած վարդի վրա:

Իմ սրտի մեջ ձայնն էր զնդում,
Մի լուսնդեն պայծառ երգի,
Դա խնդության երգն էր թովիչ՝
Այդ երջանիկ ընտանիքի:

6

Գիշերն անցավ: Շուշան այդը
Բացեց թերթերն իր ծիրանի:
Ու սեղմելով ամուր ձեռքս,
Ճամփու դրեց ինձ ծերունին:

— Դնա, որդիս, բարով գնաս,
Կյանքդ ջրից երկար լինի,
Միայն թե մեզ շնորհանաս,
Դուռս բաց է, սեղանս լի...

Օ՛, իմ բարի, բարի ծերուկ,
Չեմ մոռանա երբեք ես քեզ,
Դու կապրես հար իմ հուշերում,
Իմ առաջին ջինջ սիրո պես:

1939 40 թ.

Երևան.

Յ Ա Ն Կ

Ստալին	3
Կիշրվին քո լեռ կրծքին	4
Հայրենի հող	5
Գարուն	6
Հայաստան	7
Մայր իմ երկիր	8
Սիվ. Իսահակյանին	9
Կոլանտեօականին	10
Հողուս խելադար	11
Սևանա լճին	12
Վերջին համբույր	13
Հաղթանակի տոնը	14
Իմ սաղմիկ եղբայր	15
Սրգ հնգամյակի	16
Սրկու հնձվոր	17
Տրիտեաներ	18
Սրկու գաղել	19
Հայրենիքիս ձյունադադաթ	20
Սիրո երգեր	21
Առաջան մթնշաղին	22
Զմրուխտ սարում	23
Գու ծաղկապսակ	24
Հայրեններ	25
Զահեյ ծերունին	27



Հայաստանի Գիտությունների Գրադարան
 Հայաստանի Գիտությունների Գրադարան
 Հայաստանի Գիտությունների Գրադարան

Պատ. խմբագիր Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Տեխ. խմբագիր Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎՃ. 03214 Պատվեր № 373, Տիրած 3000 տպ. 2,5 մամ. հեղ. 1 մամ.
Հանձնված է արտադրության 28 V 1947 թ.
Ստորագրված է տպագրության 25 V (III) 1947 թ.

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Գովիլդրաֆ և Հրատ. Վարչության
№ 3 տպարան, Երևան, Ալեհիբերդյան № 65, 1947 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028679

ԳԻՆԸ Յ Ռ.

427

II
28679